ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

25 դեկտեմբերի 2021 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ
/ՀԱՏՈՒԿ ՆԻՍՏ/

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի՝ 2021 թվականի դեկտեմբերի 25-ին գումարված Երևանի ավագանու՝ օրենքի ուժով գումարված նիստում տեղի ունեցավ Երևանի նորընտիր քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի երդմնակալության արարողությունը:

Նիստը վարում էր Երևանի ավագանու ավագ անդամ Մարատ Թոխյանը:

Նիստին մասնակցում էին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, ՀՀ փոխվարչապետ Միհր Գրիգորյանը, ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը, ՀՀ ԱԺ փոխնագահ Հակոբ Արշակյանը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Վահան Նարիբեկյանը, բարձրաստիճան պաշտոնյաներ, հասարակական, քաղաքական և մշակութային գործիչներ:

Երևանի նորընտիր քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը երդվեց.

-«Երևանի քաղաքապետի լիազորություններն իրականացնելու ընթացքում պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, Երևանի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել Երևանի

քաղաքապետի լիազորությունները, ծառայել Երևանի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:

Պարտավորվում եմ հոգ տանել մեր հնագույն մայրաքաղաքի փառքի պահպանման և բազմապատկման համար, պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին:

Աջակից լինել ամեն մի ազնիվ նախաձեռնության, որ միտված կլինի իմ համաքաղաքացիների նվիրական գաղափարների իրականացմանը»:

Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ ընդունված հավելվածի 125-րդ կետի՝ Երևանի քաղաքապետի երդման ստորագրված տեքստն ի պահ հանձնվեց Երևան քաղաքի թանգարան («Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ):

Երևանի ավագանու անդամ Մարատ Թոխյանը Երևանի քաղաքապետի խորհրդանիշ լանջաշղթան հանձնեց նորընտիր քաղաքապետ Հրաչյա Սարգսյանին:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորեց Երևանի նորընտիր քաղաքապետ Հրաչյա Սարգսյանին և Երևանի ավագանու անդամներին, մաղթեց արդյունավետ աշխատանք:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը նիստը հայտարարեց փակված:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **ՄԱՐԱՏ ԹՈԽՅԱՆ**